ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 622 – Ա **09 դեկտեմբերի 2019 թ.**

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԻ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 01/10.2/28674-19 գրությամբ առաջարկությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 10-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշման հավելվածի 6.1-ին կետի պահանջների խախտման պատճառով անվավեր ճանաչել <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոսի N 2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 12-ի N 9 որոշումը՝ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու և մրցույթի օր նշանակելու վերաբերյալ:

2. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոսի N 2 միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահ Կորյուն Խաչատրյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հրավիրել խորհրդի նիստ և ընդունել սույն որոշումից բխող իրավական ակտ և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք. Գավառ